

ՀԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

«ՀՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԶԱՐԵՆՑԱՎԱՆԻ Ե. ԶԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ N5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՅ» ՊՈԱԿ -ի

2023-2028

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Տնօրենի հավակնորդ՝ Սոսե Մարգինի Պողոսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	4
Զարգացման ծրագրի ընդհանուր բնութագիրը	5
Ուսումնական հատակության ընդհանուր նկարագիրը.....	8
Հաստատության գործունեությունը	8
Դպրոցի առաքելությունը.....	16
Իրավիճակի վերլուծությունը. ուժեղ և թույլ կողմերը	18
1.1 Ուսումնական հասդարության շենքային պայմանների վերլուծությունը.....	18
1.2 Ուսումնական հասդարության նյութագեխնիկական բազայի վերլուծությունը	24
1.3 Հասդարության կառավարման մարմնի և գնորենի համագործակցության վերլուծությունը.....	26
1.4 Հասդարության համագործակցությունը գրեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ.....	29
1.5 Մանկավարժական համակազմի մասնագիրական որակների ներկայացում	34
Աշակերդական համակազմ	42
1.6 Օգդագործվող <i>S<S</i> և կրթական այլ գրեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացումը	47
1.7 Զափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը.....	48
1.8 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն.....	53
1.9 Աշխատակազմի արժեվորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը	54
1.10 Ուսումնական նպատակով կարգաված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների դեսանկությունից.....	55
Նպատակների և խնդիրների սահմանումը	62

1.Ուսումնական հաստատության գործունեության սահմանված նպատակների ու խնդիրների իրականացումն ապահովող գործողություններն ու միջոցառումները.....	69
2.Համապատասխան ժամանակացույցերը և պատասխանատուները.....	69
3.Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը և ռիսկերը մեղմացնող կամ չեղոքացնող գործողությունները	69
4.Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները.....	69
5.Վերահսկողները.....	69
Համապատասխան հաշվետվությունների սահմանված ձևեր և ժամանակացույցեր	114
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ	114
ԵԶՐԱՓԱԿՈՒՄ	141
ՀԱՎԵԼՎԱԾ /ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ/.....	143

Ներածություն

Կրթությունը Հայաստանի Հանրապետությունում երկրի զարգացման ու հզորացման, ազգային անվտանգության ապահովման երաշխիք է:

21-րդ դարի մրցունակ պետության հիմքը մրցունակ կրթական համակարգի ստեղծումն է, կրթված, ժամանակի պահանջներին ու արդիական մտածողությանը համապատասխանող, ազգային ու համամարդկային արժեքներ կրող քաղաքացու ձևավորումը:

Ներկա աշխարհաքաղաքական իրողություններում գերակա խնդիր է համարվում Հայաստանի Հանրապետությունում մրցունակ կրթության ոլորտի ապահովումը, իսկ համապետական այդ կարևորագույն առաջնահերթության ապահովման հիմնական առանցքը համարվում է դպրոցը՝ իր ողջ գործիքազմով և հնարավորություններով։

Հայաստանի Հանրապետությունը հոչակել և երաշխավորում է կրթության բնագավառի զարգացումը՝ որպես անհատի և հասարակության անվտանգության և կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանման կարևոր գործոն։

«Կուրայքի մարզի «Զարենցավանի Ե.Զարենցի անվան N5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիրը կազմելիս օգտագործվել են ոլորտը կարգավորող դարրեր նորմատիվ –իրավական փաստաթղթեր և օրենքներ՝ «Կրթության մասին» և «Օրենք, «Հանրակրթության մասին» և «Օրենք, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» և «Օրենք, «Երեխաների իրավունքների մասին» և «Օրենք, «Հանրակրթության պետական չափորոշիչ, Դպրոցի կանոնադրություն, «Երեխաների իրավունքների մասին» և «Օրենք, «Կրթության ոլորտը կարգավորող կարգեր, կառավարության որոշումներ, հրամաններ... հնչան նաև կրթության զարգացման ծրագրի նախագծով նախատեսված առաջնահերթ ուղղությունների պահանջները՝ հաշվի առնելով նաև մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները և դպրոցում առկա հիմնախնդիրները։ Այն հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթ է, որը դառնալու է առաջիկա հինգ տարիների դպրոցավարության հիմնական ուղեցույցը և բավարար հենք է ստեղծելու ուսումնական հաստատության առաջընթացների և հաջողությունների համար։

Հանրակրթություն իրականացնելիս յուրաքանչյուր դպրոց, հնչան և մեր դպրոցը, պետք է մեծ ուշադրություն դարձնի սովորողների նոր չափորոշչին ուղղված կարողունակությունների, քննադատական և վերլուծական մտածողության զարգացման վրա, որոնք սահմանված են պետական նոր կրթակարգում։ Հանրակրթական ուսումնական հաստատություններում պակաս կարևոր խնդիր չէ նաև ուսուցչի հեղինակության և մոտիվացիայի հարցը։ Խնդիր կա հասարակության մեջ բարձրացնել ուսուցչի հեղինակությունը։ Մյուս կարևոր հարցերից մեկը վերաբերում է ուսուցչի մոտիվացիային, որի ցածր մակարդակը պայմանավորված է ոչ միայն նրա

հանդեպ վերաբերմունքով, այլև ուսուցչի ցածր աշխատավարձով: Դպրոցները խնդիր ունեն նաև ինչպես բարոյական, այնպես էլ նյութական խրախուսման և մրցակցության ծևավորման միջոցով բարձրացնել ուսուցչի մոտիվացիան, ինչի վառ ապացույցն է ուսուցչի կամավոր ատեստավորումը:

«Հանրակրթական ուսումնական հաստատությունները այսօր խնդիր ունեն նաև մեծացնելու իրենց շիման հորիզոնը, գտնելու սոցիալական գործընկերներ, համագործակցելու տարբեր կազմակերպությունների և կառույցների հետ՝ իրենց հնարավորությունները մեծացնելու համար:

Այս այս հայեցակարգերից ելնելով է կազմվել սույն զարգացման ծրագիրը, որում մեծ ուշադրություն է դարձված սովորողների ու մանկավարժների մոտիվացիային և ինքնազարգացմանը: Եվ այս ամենի տրամաբանությունն էլ դրվելու է «Կոտայքի մարզի «Զարենցավանի Ե.Զարենցի անվան N5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի՝ առաջիկա հինգ տարիների զարգացումն ապահովելուն ուղղված համընդհանուր աշխատանքներում և սույն զարգացման ծրագրի՝ հավանության արժանանալու պարագայում արվելու է առավելագույն հնարավորը կրթօջախում բարեփոխումներ իրականացնելու, ուսումնական միջավայրը շեշտակիորեն բարելավելու և ժամանակակից ու պահանջված դպրոց կերտելու հարցում:

Զարգացման ծրագրի ընդհանուր բնութագիրը

Ամբողջական անվանումը	«ԿոՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԶԱՐԵՆՑԱՎԱՆԻ Ե. ԶԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ N5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ -ի
-------------------------	---

	զարգացման ծրագիր 2023-2028 թվականների համար
Ծրագրի իրականացման ժամանակաշրջանը և փուկերը	<p>Ծրագիրը նախատեսված է 2023-2028 թվականներին իրականացման համար՝ հետևյալ փուլերով.</p> <ul style="list-style-type: none"> ➤ 2023-2024 թթ. – կազմակերպչական փուլ – դպրոցում իրականացվող կրթական գործընթացի իննովացիոն մոդելների մշակում ➤ 2023-2027 թթ. – փորձարարական գործունեության փուլ – ծրագրերի փորձարկում, կրթական գործընթացի կազմակերպման իննովացիոն մոդելների ներդրում աշխատանքում ➤ 2027-2028 թթ. – վերլուծական փուլ – աշխատանքի արդյունքների վերլուծություն, ծրագրի իրագործման արդյունքների արձանագրում, հետագա զարգացման հեռանկարային ուղիների որոշում ➤ 2023-2028 թթ. (յուրաքանչյուր տարվա ապրիլ-մայիս ամիսներ) – մոնիթորինգի փուլ – փորձարարական փուլում իրականացվող աշխատանքի արդյունավետության և որակի մոնիթորինգ, շտկումների իրականացում
Ծրագրի նպատակը	Կրթական այնպիսի միջավայրի ստեղծում, որը կնպաստի սովորողի կայացմանը որպես կոմպետենտ և ինքնուրույն անհատ, ով կճանաչի, կհարգի իր ազգային, համամարդկային արժեքները և անընդհատ փոփոխվող իրավիճակի պայմաններում պատրաստ կլինի ինքնահրացման, ինքնաճանաչությանը
Հիմնական խնդիրները	<ul style="list-style-type: none"> ➤ բարձրացնել մանկավարժական աշխատողների մոտիվացիան և մասնագիտական հմտությունների մակարդակը ➤ մանկավարժների և սովորողների գործունեության մեջ ներդնել հետազոտական, ստեղծագործական և նախագծային աշխատանք ➤ զարգացնել դպրոցը որպես ծնողների, սոցիալական գործընկերների, հասարակական կազմակերպությունների, սոցիալական ոլորտի հիմնարկների հետ համագործակցության կենտրոն, ➤ բարձրացնել դպրոցի մրցունակությունը

<p>Ասախող վերջնադրությունից</p>	<ul style="list-style-type: none"> ➤ Ուսումնադաստիարակչական գործընթացի արդիականացում՝ պետական կրթական չափորոշչին և կրթակարգին համապատասխան ➤ Յուրաքանչյուր սովորողի հնարավորությունների բացահայտման և զարգացման համակարգի ձևավորում ➤ Մանկավարժների մասնագիտական հմտությունների զարգացում ➤ Սովորողների առողջության պահպանում և ամրապնդում ➤ Նյութատեխնիկական բազայի հարստացում ➤ Դպրոցի պետական-հասարակական կառավարման մակարդակի բարձրացում ➤ Կրթության կազմակերպման մասնակիցների ինֆորմացիոն մշակույթի զարգացում ➤ Ուսումնական հաստատության ներքին կազմակերպչական մշակույթի ձևավորում:
Պաշտոնական կայք	https://charencavan5.schoolsite.am/
Սոցիալական հարթակ	https://www.facebook.com/profile.php?id=100057205760335
Էլեկտրոնային հասցե՝	charentsavan5@schools.am
Ներքին գնահատում՝	https://charencavan5.schoolsite.am/ներքին-գնահատում/
Պաշարների շտեմարան՝	https://lib.armedu.am/
Ծրագրի իրականացման վերահսկողությունը	<ul style="list-style-type: none"> ➤ Իրականացվելու է դպրոցի վարչական անձնակազմի և կառավարման մարմինների կողմից

	<p>մոնիթորինգի և վերահսկողական ուղենիշային (ժամանակային) կետերի միջոցով</p> <ul style="list-style-type: none"> ➤ Յուրաքանչյուր տարվա նախանշված աշխատանքների արդյունքերի ներկայացում դպրոցի խորհրդին ➤ Յուրաքանչյուր ուսումնական տարվա դպրոցի գործունեության ներքին գնահատման հաշվետվության հրապարակում ➤ Ավելի փոքր ժամկետների արդյունքները կը ներկայացնեմ մանկավարժական, ծնողական և աշխակերտական խորհուրդների, առարկայական մեթոդական միավորումների նիստերում: ➤ Դպրոցի տարեկան ներդպրոցական վերահսկողության պլանի մշակում և իրականացում
--	--

Ուսումնական հստատության ընդհանուր նկարագիրը

Հաստատության գործունեությունը

Զարենցավանի թիվ 5 միջնակարգ դպրոցը ստեղծվել է 1978 թվականին՝ Ենթարկվելով Հրազդանի շրջգործկոմի ժողկորթաժնին, իսկ 1983 թվականին՝ Զարենցավանի քաղործկոմի ժողկորթաժնին:

2003թ.օգոստոսի 21-ին դպրոցը Զարենցավանի վարժարանի հետ միաձովման

ճանապարհով վերակազմավորվել է որպես <<Կոտայքի մարզի <<Զարենցավանի թիվ 5 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն, որը 2008 թվականի նոյեմբերի 14-ին վերանվանվել է <<Զարենցավանի Եղիշե Զարենցի անվան N5 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ և կրկին վերանվանվել և գրանցվել է << իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Զարենցավանի տարածքային բաժնում՝ անվանվելով <<Կոտայքի մարզի <<Զարենցավանի Եղիշե Զարենցի անվան N5 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ (ՎԿԱՅԱԿԱՆ 03Ա 061819 15.12.2010թ.):

Դպրոցի կանոնադրությունը բաղկացած է 19 թերթից, հաստատվել է <<Կոտայքի մարզական 02.12.2010 թվականի N458 որոշմամբ:

Դպրոցն օգտվում է իրավաբանական անձի իրավունքից, ունի գինանշանով կլոր կնիք և հաշվարկային հաշիվ բանկում:

Համաձայն <<կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հունիսի 17-ի N 1111-Ա/Ք հրամանով տրված լիցենզիայի՝ դպրոցն իրավունք ունի իրականացնելու

տարրական ընդհանուր առաջին աստիճանի կրթական ծրագիր՝ 320 սահմանային տեղով և 2010 թվականի հունիսի 17-ի N 1111-Ա/Ք հրամանով տրված լիցենզիայի՝ հիմնական ընդհանուր երկրորդ աստիճանի կրթական ծրագիր՝ 400 սահմանային տեղով:

2022-2023 ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ աշակերտների ընդհանուր թիվը կազմել է 671 աշակերտ, որոնցից 308

աշակերտ՝ I-IVդաս. -11 դասարան

363 աշակերտ՝ V - IX դաս. -12 դասարան:

2023թվականի հունվարի 16-ի դրությամբ աշակերտների ընդհանուր թիվը կազմել է 676 աշակերտ, որոնցից 308 աշակերտ՝ I-IVդաս.
-11 դասարան

368 աշակերտ՝ V - IX դաս. -12 դասարան:

Դպրոցում սովորում են նաև ԿԱՊԿՈՒ 10 աշակերտ:

2015 թվականից <ՊԾ-ի և ՄԱԿ-ի հայկական հիմնադրամի աջակցությամբ, ծնողական խորհրդի մասնակի ներդրումով 1-4 դասարանների աշակերտներն օգտվել են <<Տաք սնունդ>> ծրագրից: 2023թվականից սկսած՝ օգտվում են «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» ազգային ծրագրից:

Դպրոցի շենքը տիպային է, կազմված է վեց մասնաշենքերից, մեկը միահարկանիէ, հինգը՝ երկհարկանի:

Դպրոցի հզորությունը՝ 720 աշակերտ տեղ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լիցենզիա

ՏԱՐՐԱԿԱՆ

ընդհանուր՝ 1-ին աստիճան

(ծրագրի անվանումը)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա

№ 0325

Սույնով վավերացվում է, որ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԻՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԱՎԱՆ 5 ՄԻՋԱՎԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

(կազմակերպության լրիվ անվանում, կազմակերպական-դրասական ձևը)

Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, 6-րդ թաղամաս

(գոտնվեռության կամաց վայրը)

Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, 6-րդ թաղամաս

(գործունեության կրականացման վայրը)

Իրակումը ունի իրականացնելու

Տարրական

ընդհանուր՝ 1-ին աստիճան

(ծրագրի անվանումը)

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ

(ստորագրությունը)

Ա. Աշուոյան

(անունը, ազգանունը)

Կ.Տ.

17 հուլիսի 2010

Անժամկետ

(լիցենզիայի գործողության ժամկետը)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No 1111-64

« 12 » 07 2010

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ <<ԶԱՐԵՒՑԱՎԱՆԻ ԹԻՎ 5 ՄԻՋԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ 1-ԻՆ ԱՍՏԻճԱՆ,
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով,
Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ հուլիսի 9-ի <<Հայաստանի
Հանրապետությունում կրթական ծրագրերի իրականացման (բացառությամբ բժշկական
միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի) լիցենզավորման կարգերը,
լիցենզիայի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000
թվականի հուլիսի 7-ի N 372 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N 808-Ն
որոշմամբ հաստատված <<Տարրական ընդհանուր՝ 1-ին աստիճան, կրթական ծրագրի
իրականացման լիցենզավորման>> կարգի 8-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ
կրթության և գիտության նախարարության <<Կրթական ծրագրերի իրականացման
լիցենզավորման հանձնաժողովի>> եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՆՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Կուտայրի մարզի <<Զարենցավանի թիվ 5 միջնակարգ դպրոց>> պետական ոչ
առևտրային կազմակերպությանը տալ տարրական ընդհանուր՝ 1-ին աստիճան,
կրթական ծրագրով, առկա ուսուցմամբ, համակազմի սահմանային 320 տեղով
կրթական գործունեության լիցենզիա:

-
2. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման վարչության պետ Մ.Մովսիսյանին:
3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա.Ավետիսյանին:



Ա. ԱՇՈՏՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՀԻՄՆԱԿԱՆ

ընդհանուր՝ 2-րդ աստիճան

(քաղաքացի ամփառման)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱԼՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա

№ 0320

Սույնով վավերացվում է, որ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՍԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ Ն 5 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՐԱՄՈՑ» ՊՈՍԿ
(կազմակերպության լրիվ ամփառման, կազմակերպակամագության մեջ)

Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, 6-րդ թաղամաս
(գտնվելու վայրը)

Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, 6-րդ թաղամաս
(գործունության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Հիմնական

ընդհանուր՝ 2-րդ աստիճան

(քաղաքացի ամփառման)

հանրակրթական ծրագիր



Ա. Աշոտյան

(անունը, ազգանունը)

Կ.Տ.

« 17 » հուլիսի 2010 թ.

Անժամկետ

(իշխանական գործության ժամկետը)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

№ 1913 - Ե/թ

«17 օշ 2010թ»

ՀՀ ԿՈՆՍԱՑՔԻ ՄԱՐԶԻ «ՀԱՐԵՆՑԱՎԱՆԻ ԹԻՎ 5 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՑԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ 2-ՐԴ ԱՍՏԻճԱՆ,
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԳՈՐԾՈՒԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Նեկավարվելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով,
Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ հուլիսի 9-ի «Հայաստանի
Հանրապետությունում կրթական ծրագրերի իրականացման (բացառությամբ քժշկական
միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի) լիցենզավորման կարգերը,
լիցենզիայի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000
թվականի հուլիսի 37-ի N 372 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 808-Ն
որոշմամբ հաստատված «Հիմնական ընդհանուր՝ 2-րդ աստիճան, կրթական ծրագրի
իրականացման լիցենզավորման» կարգի 8-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ
կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի իրականացման
գործունեության լիցենզիա» եղբակացությունը՝

ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ

- ՀՀ Կոտայքի մարզի «Չարենցավանի թիվ 5 միջնակարգ դպրոց» պետական ոչ
առևտային կազմակերպությանը տալ հիմնական ընդհանուր՝ 2-րդ աստիճան,
կրթական ծրագրով, առկա ուսուցմամբ, համակազմի սահմանային 400 տեղով կրթական
գործունեության լիցենզիա:

-
2. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման վարչության պետ Ա.Մովսիսյանին:
3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա.Ավետիսյանին:

Ա. ԱՇՈՏՅԱՆ



Դպրոցի առաքելությունը

Հանրակրթությունը նպատակառության է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ծևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը: Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը.

- ❖ Դպրոցը դարձնել առաջատար ուսումնական հաստատություն՝ բարենպաստ կրթական միջավայր՝ յուրաքանչյուր աշխատողի և սովորողի ստեղծագործական կարողությունները, նախասիրությունները բացահայտող և խթանող, անձի համակողմանի ծևավորմանը նպաստող, որակյալ կրթություն ապահովող կրթական կենտրոն, որտեղ ապահովված կլինի աշակերտների բազմակողմանի զարգացումը, ժողովրդավարական հասարակության լիարժեք անդամների դաստիարակումը՝ ազգային և համամարդկային արժեքների զուգորդմամբ: Այս առաքելությունը առավելապես կրավարարի համայնքի բնակիչների պահանջները՝ որակյալ և կողմնորոշված կրթության առումով:
- ❖ Սովորողների անհատական և տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ յուրաքանչյուր երեխայի ներառվածություն ուսումնառության գործընթացի մեջ, աշակերտի մտավոր և ֆիզիկական կարողությունների առավելացույն ներուժին համապատասխան:
- ❖ Անկախ կազմակերպական իրավական ձևից ուսումնական հաստատությունների և դրանցում սովորողների ու աշակերտների իրավահավասարությունը:
- ❖ Հանրակրթության և այլ կրթական ծրագրերի փոխհամաձայնեցվածությունը:

Ըստ կառավարության հնգամյա ծրագրի՝ ոլորտի զարգացումը սերտորեն կապակցվելու է պետության զարգացման ռազմավարությանը և գերակայություններին: Հանրակրթությունը գերակա ուղղություն է: << Կառավարության կողմից կրթության ոլորտի համար նախատեսված ֆինանսական միջոցների մեծ մասը հատկացվում է հանրակրթությանը: Հանրակրթական դպրոցը, որպես հիմնական և ամենաերկարատև կրթություն իրականացնող հաստատություն, կրթության որոշակի առանցքային կառույց է, որով պայմանավորված է անհատի հետագա կյանքի և հասարակության հաջողությունը:

Առաքելությունը կազմակերպության համար ցանկայի ապագայի մրապապրկերն է:

Մոտակա տարիներին Զարենցավանի Ե. Զարենցի անվան N5 հիմնական դպրոցի առաքելության ուղղություններ կանխատեսում եմ՝

Ժամանակակից պահանջներին համապատասխան կրթության հավասար պայմաններով միջավայր, որտեղ յուրաքանչյուր ոք կարող է ստանալ իր պահանջներին համապատասխան որակյալ կրթություն

Որակյալ կրթության ապահովման նպատակով անհրաժեշտ է ապահովել բոլոր բաղադրիչների արդյունավետությունը:

Դրանք են՝

- Բովանդակության ապահովում
- Ուսուցման միջավայր՝ արդի պահանջներին համապատասխան
- Մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացում
- Արդյունավետ կառավարում
- Վերջնարդյունք

Դպրոցի առաքելությունը կայանում է անհատի պահանջների լիարժեք բավարարման մեջ:

Իսկ դպրոցի առաքելությունը իրականություն դարձնելու համար մեզ անհրաժեշտ են

Ֆինանսական, նյութական և այլ ռեսուրսներ, դպրոցի կառավարման համակարգված գործընթաց:

Միաժամանակ այս զարգացման ծրագրը իննովացիոն է և կանխատեսումային, որը

. հստակ նպատակադրում է դպրոցի զարգացումը (սա նշանակում է, որ դպրոցում իրականացվող ամենամյա ցիկլային աշխատանքը և գործունեության ծները այստեղ նշված չեն, այլ նշված են միայն գործունեության նոր ծները և նոր մոտեցումները),

. ներառում է նորարարությունների ներդրման պլանը,

. կազմված է՝ հաշվի առնելով ապագայի պահանջարկը,

. այս պատճառով էլ այն հենվում է այն կանխատեսման վրա, թե ինչպիսին կլինի միջավայրը ապագայում, ինչպիսին կլինեն դպրոցի հանդեպ պահանջները և ինչպիսին կլինեն նոր մոդելների ներդրման արդյունքները:

Այս կազմակերպչական մշակույթը ներդնելու դեպքում զարգացման ծրագրի իրականացման քայլերը կլինեն հետևյալ հաջորդականությամբ.

1. Աշխատանք անձնակազմի մասնագիտական հմտությունների բարձրացման ուղղությամբ, առաջնորդների բացահայտում, համապատասխան թիմերի ծնավորում:
2. Զարգացման հիմնական ուղղությունների հստակեցում և համաձայնեցում թիմերի հետ:
3. Զարգացումն ապահովող գործողությունների պլանավորում, անարդյունավետ գործողությունների հնարավորինս բացառում:

Իրավիճակի վերլուծությունը. ուժեղ և թույլ կողմերը

Ներքին և արրաքին միջավայրը ուսումնական հաստատության նպատակների իրականացմանն ուղղված գործունեության, կրթական գործընթացի մասնակիցների և առկա ռեսուրսների փոխկապակցված ամբողջությունն է: Դպրոցի ներքին և արտաքին միջավայրի վերլուծության համար բաղադրիչներն են՝ ուժեղ կողմեր, թույլ կողմեր, հնարավորություններ և վտանգներ: Վերլուծությունն իրականացվել է ըստ պայմանական առանձնացված ոլորտների: Վերլուծությունը կատարվել է ներքին գնահատման հաշվետվության, հարցումների, շենքային և ռեսուրսային պայմանների դիտարկման, համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրության, դպրոցի ինտերնետային կայքի ուսումնասիրության, նմանատիպ այլ դպրոցների հետ համապատասխան ցուցանիշների համեմատության հիման վրա:

1.1 Ուսումնական հասկավության շենքային պայմանների վերլուծությունը

Շենքային պայմանների բոլոր պարամետրերը

Դպրոցի շենքը և հարմարությունները				
Հարկայնությունը				2
Նախատեսված աշակերտական տեղերի քանակը				735
Տվյալ շենքում դպրոցի տեղակայման տարեթիվը				1978
Փաստացի հաճախող երեխաների թիվը				676
Շենքի ընդհանուր մակերեսը, մ ²				4902.00
Հեռավորությունը ամենամոտ դպրոցից (մոտակա բանուկ ճանապարհով, կմ-ով)				0.50
Դպրոցին կից տարածքի մակերեսը, մ ²				Կաթսայատուն՝ 22,89 ֆուտրովի դաշտ՝ 6758,7 բասկետբոլի դաշտ՝ 384,3
Տարածքների անվանումները				
Անվանումը	Քանակ	Ընդհանուր մակերեսը, քառ. մ	Փաստացի գործողների քանակը	Դրանց ընդհանուր մակերեսը, քառ մ
Առանձնասենյակ	8	168.7	8	168.7

Դասասենյակ	24	1148.18	24(որից 6-ը ունի վերանորոգման կարիք)	1184.76
Լաբորատորիա	2	39.49	2	39.49
Համակարգչային դասասենյակ	1	51.02	1	51.02
Նախնական գինպատրաստության	1	52.2	1	52.2
Զենքի պահեստ	1	12	1	12
Սպորտդահլիճ	1	296.36	1	296.36
Բացօթյա սպորտիրապարակ	2	7143.0	2	7143.0
Նիստերի դահլիճ	1	297.6	1	297.6
Ճաշարան	1	248.4	1	248.4
Բուժսենյակ	1	15.9	1	15.9
Զուգարան	13	114.85	13	114.85
Գրադարան	1	55.18	1	55.18
Տեխնիկական նշանակության սենյակ	7	173.06	7	173.06

Ենթակառուցվածքները	
Շենքի վիճակը	Կարիք ունի ընթացիկ նորոգման
Վերջին անգամ հիմնանորոգումը իրականացվել է	2013
Հիմնանորոգումը ընթացքի մեջ է	Ոչ
Վերջին անգամ ընթացիկ նորոգումը իրականացվել է	2018
Ընթացիկ նորոգումը ընթացքի մեջ է	Ոչ

Զրամատակարարումը	Գրաֆիկով կենտրոնացված
Կոյուղացումը	Կենտրոնացված
Էլեկտրամատակարարումը	Առկա է
Գազամատակարարումը	Առկա է
Տաք ջրամատակարարումը	Բացակայում է
Ջեռուցումը	Կենտրոնացված
Հեռախոսային կապը	Առկա է
Ինտերնետային կապը	Առկա է
Հայաստանի կրթական ցանց	Առկա է

Շենքային պայմանների վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
--------------	--------------

<p>. Դպրոցն ունի կենտրոնացված ջեռություն, գրաֆիկով ջրամատակարարում, հեռախոսային կապ, ինտերնետ կապ: 2006-2013թթ. իրականացվել և ավարտվել է դպրոցի վերանորոգումը, որի արդյունքում սանհանգույցները, դասասենյակները, պատուհանները, ճաշարանը, հանդիսությունների դահլիճը, դպրոցի արտաքին տեսքը բավարար են:</p> <p>. Դպրոցի բոլոր հարկերում առկա են առանձնացված վերանորոգված սանհանգույցներ՝ տղաներին սենյակների համար:</p> <p>Վերանորոգվել է մարզահրապարակը, ամբողջովին փոխվել է դպրոցի ցանկապատը:</p> <p>. Դպրոցն ունի տարածք՝ մեկուսացված աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից:</p> <p>. Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին:</p> <p>. Դպրոցի տարածքը մաքուր է, իսկ լաբորատորիաներում օգտագործվող այրվող և այլ վտանգավորնյութերի թափոնները, աղբը կանոնավոր հավաքվում են հատուկ աղբարկղներում</p> <p>և դուրս են բերվում հաստատության տարածքից:</p> <p>. Հովանավորի օգնությամբ դպրոցն ունի ոռոգման համակարգ:</p> <p>. Դպրոցն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով:</p> <p>. Դպրոցն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակարդեհային, անվտանգության լրակազմով:</p> <p>Ուսումնական հասպարությունում պահպանված են սովորողների և աշխատակազմի համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար</p>	<p>. Զկա հաշմանդամություն ունեցողների համար հարմարեցված հատուկ սանհանգույց, դպրոցի ներսում չկան թեքահարթակներ</p> <p>. չկան ԿԱՊԿՈՒ սովորողների համար նախատեսված սենյակներ սենյակներ և մանկավարժահոգեբանական աջակցության կարինետներ</p> <p>. Զկա Արմաթ ճարտարագիտական աշխատանոց</p> <p>. Զունենք գույքի այլընտրանքային դասավորությամբ դասասենյակներ:</p> <p>. Վերանորոգման կարիք ունի դպրոցի տանիքը</p> <p>. Բացակայում է ընթերցասրահը</p>
--	---

**անհրաժեշտ անվտանգության և սանիդարահիգիենիկ նորմերը,
կազմակերպված են առողջության պահպանման
համապատասխան ծառայություններ**

1. Դպրոցի շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմատիվներին:
2. Դպրոցի շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային 3 ելքեր:
3. Դպրոցն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով:
4. Դպրոցի շենքի մուտքը հարմարեցված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժման համար:
5. Դպրոցը ապահովված է սարքին վիճակում գտնվող հակարդեհային, անվտանգության լրակազմով:
6. Դպրոցի կահույքի բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները, դեկորատիվ իրերը:
7. Դպրոցի կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է:
8. Դպրոցում մշակված և առկա է սովորողների ու անձնակազմի տարհանման պլան:
9. Դպրոցի նախասրահում, բոլոր հարկերում, փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցաևլաքներով:
10. Դպրոցի տարհանման ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով:

**Ուսումնական հասկարության նախագծային հզորությունը
նկարգրող ցուցանիշներ և չափանիշներ**

**Չարենցավանի N5 հիմնական դպրոցը պահպանում է իր
նախագծային հզորությունը:**

1. Դպրոցում սովորողների թիվը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվներին և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին:

2. Դպրոցի դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում են առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերին;

Դասասենյակներում սեղան նստարանները դասավորված են շարքերով՝ ուսման պրոցեսում դեպի գրատախտակ սովորողների հարմարավետությունն ապահովելու նպատակով:

Սակայն ըստ անհրաժեշտության, դասապրոցեսի ընթացքում ինտերակտիվ մեթոդների կիրառման նպատակով կատարվում է սեղան- նստարանների վերադասավորություն: Հիմնականում 1 սովորողին ընկնող մակերեսին վերաբերող իրավիճակը բավարար է,

Դպրոցի սովորողները «Ֆիզկոլտուրա» առարկայի ուսումնական դասընթացները անցկացնում են մարզադահիճում

. Դպրոցում առկա է սննդի կետ՝ ճաշարան, որը ապահովված է սառնարանով: Ճաշարանը մաքուր է, լուսավոր, հարմարավետ: Աշխատակիցները կրում են համապատասխան արտահագուստ: Ճաշարանը համապատասխանում է սանհիտարահիգիենիկ նորմերին, կա հիսող ջրի ծորակ, <<Զրատաքացուցիչ>>տաք ջրի համար: Ճաշարանում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ: Ճաշարանը 2023 թվականի մայիս-հունիս ամիսներին բացառապես պետական բյուջեով ապահովվեց համապատասխան սեղան- աթոռներով: Ամբողջությամբ փոխված է սպասքը:

. Դպրոցում գործում է բուժկետը: Բուժկետում առկա առաջին օգնության պարագաները և դեղորայքը համապատասխանում են չափանիշներին: Բուժկետը իր աշխատանքային գործունեությունը համատեղում է քաղաքային բուժմիավորման հետ:

--	--

1.2 Ուսումնական հասկալության նյութակրեինիկական բազայի վերլուծությունը

Շահագործվող ՀՄ-ներ	
Անվանում	Քանակ/չափ
Պահարան	29
աշակերտական սեղան	380
աշակերտական աթոռ	760
ուսուցչական սեղան	30
ուսուցչական աթոռ	32

Գրատախտակ	57
Դաշնամուր	2
Կլոր սեղան	6
Վիոքր սեղան	1
Բազմոց	2
Կախիչ	26
Բազկաթռո	4

ՏՀՏ սարքավորումներ

Սարքավորում	Առկա քանակություն	Պահանջարկ
Համակարգիչ	20	10
բազմաֆուկնցիոնալ տպիչներ	6	3
Նոթբուք	5	0
Պրոյեկտոր	1	2
Մուտքագրիչ/սկաներ	1	1
Տպիչ	2	2
Էլեկտրոնային գրատախտակ	0	1
Արտատպիչ	0	3
Անխափան սնուցման սարք(UPS)	3	1

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցի կահույքը հիմնականում համապատասխանում է	.Որոշ կարինետների գույքի հնամաշ լինելը (սեղան, աթռո,

<p>անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է:</p> <p>.Դպրոցում մշակված է և առկա է սովորողների ու անձնակազմի տարիանման պլան:</p> <ul style="list-style-type: none"> .Դպրոցի համակարգիչները միացված են համացանցին .Կան քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության լաբորատորիաներ, ԱՀՊ և համակարգչային, աշխատանքի ուսուցման, աշխարհագրության կարինետներ .Կա գրադարան՝ գրքերի փոքր ֆոնդով .Մասնագիտական համապատասխան գրականության առկայություն .Գրադարանավարները տիրապետում են գրադարանավարության էլեկտրոնային ծրագրին .Ֆիզիկայի լաբորատորիայի հագեցվածությունը բավարար է փորձերը պատշաճ մակարդակով անցկացնելու համար, մարզադահլիճը հագեցված է մարզագույքով: 	<p>պահարան, համակարգիչ</p> <ul style="list-style-type: none"> .Կարինետները վերջնական տեսքի բերված չեն և բարձր արդյունավետությամբ չեն աշխատում. .Չկա օտար լեզուների լինգվաֆոնային կարինետ .Համակրգչային կարինետը չի կարող բավարարել միանգամայց մի քանի դասարանի սպասարկման համար .Որոշ դասարաններում ևս անհրաժեշտ է նաև գույքի փոփոխություն՝ հին գույքի փոխարինումը նորով: .Քիմիայի լաբորատորիան հագեցված չէ անհրաժեշտ քիմիական նյութերով, առկա նյութերը հին են: .Աշխատանքի ուսուցման համար նախատեսված սենյակում չկան անհրաժեշտ սարքավորումներ:

1.3 Հասկալության կառավարման մարմնի և դնորենի համագործակցության վերլուծությունը

«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրության 27-րդ կետի համաձայն հաստատության կառավարումն իրականացնում է՝

- 1) հիմնադիրը՝ ի դեմս Հայաստանի հանրապետության
- 2) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանը (այսուհետ՝ լիազորված մարմին).

3) կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը.

4) գործադիր մարմինը՝ տնօրենը և վարչատնտեսական մասի համակարգող (այսուհետև՝ համակարգող << կառավարության 2023 փետրվարի 16 N216-Ն որոշում):

Ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը հաստատության խորհուրդն է, որի գործառույթներն ամրագրված են Հանրակրթության մասին <<օրենքում և ուսումնական հաստատության կանոնադրության մեջ:

Դպրոցում գործում են հետևյալ կառավարման և խորհրդակցական մարմինները՝

- Կառավարման խորհուրդ՝ 9 անդամ
- Մանկավարժական խորհուրդ՝ մանկավարժական բոլոր աշխատողները՝ 50 անդամ,
- Ծնողական խորհուրդ՝ 23 անդամ,
- Աշակերտական խորհուրդ՝ 18 անդամ
- առարկայական մեթոդիավորումները՝ 5 (Հումանիտար, բնագիտական, գեղագիտական, տարրական, օտար լեզուներ)

Դպրոցի կառավարման խորհուրդը իր լիազորությունների շրջանակում իրականացնում է դպրոցի ընթացիկ գործունեության վերահսկումը, քննարկում դպրոցի առաջիկա անելիքները, տալիս հավանություն, վերհսկողություն է իրականացնում դպրոցի զարգացման ծրագրի կատարման նկատմամբ, քննարկում ֆինանսական և ուսումնադաստիհարակչական գործունեության հաշվետվությունները։ Կառավարման խորհուրդը իր գործունեությամբ նպաստում է դպրոցի բնականոն զարգացմանը։

Հաստատության տնօրենը՝

.Խորհրդին է ներկայացնում ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացումն ապահովող տարեկան գործողություններ ժամանակացուցը

.Խորհրդի հաստատմանն է ներկայացնում դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները, աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները

. Խորհրդին հավանությանն է ներկայացվում մանկավարժահոգոբանական աջակցության ծառայությունների և ԿԱՊԿՈՒ սովորողների կազմը

.Տնօրենը մասնակցում է խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով

.Խորհրդի հաստատմանն է ներկայացնում դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները, աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները

.Պարբերաբար ներկայացնում զարգացման ծրագրի կատարողականության և ուսումնադաստիհարակչական

աշխատանքների հաշվետվություններ

.2021-2022 ուստարում դպրոցի խորհուրդը աշխատել է համաձայն կառավարման խորհրդի կողմից հաստատված աշխատանքային պլանի:

.Հրավիրվել է 6 նիստ, բոլոր նիստերն արձանագրված են: Խորհուրդը ուսումնասիրել է հաշվապահական և կադրային նորմատիվները հաստատել հաստիքացուցակը, աշխատողների դրույքաչափային ցուցակը: Լսել և հաստատել է 2020-2021 ուստարված ներքին գնահատման հաշվետվությունը հաստատել է ոստիցի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին տնօրենի կողմից ներկայացրած կարգը, կարգում եղած փոփոխությունները, քննարկել հաստիքացուցակը, հավանության արժանացրելորից հետո այն ներկայացվել է լիազոր մարմնի հաստատմանը:

.Խորհուրդը քննարկել և հաստատել է տարեկան և եռամյակային ծախսերի նախահաշվային նախագծերը՝ հաշվի առնելով ծախսային նախագծերի վերաբերյալ բոլոր կարծիքներն ու առաջարկությունները:

.Կառավարման խորհուրդն աշխատել է արդյունավետ՝ նպաստելով կրթական գործընթացի համար բարենպաստ պայմանների ստեղծմանը և ուսումնադաստիարակչական աշխատանքներին:

Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none">. Տնօրենի կողմից իրականացվող ուսունադաստիարակչական աշխատանքներին վերաբերող առաջարկները, որանք ուղղված են կրթության որակի բարելավմանը, ողջունվում են Կառավարման մարմինների և լիազոր մարմնի կողմից:. Սերտ համագործակցություն կառավարման մարմնի, լիազոր մարմնի, տնօրենի հետ՝. Կառուցողական մթնոլորտ. Փոխադարձ համագործակցություն. Լիազոր մարմինը տալիս է հստակ լուծումներ, սպառիչ պատասխաններ առաջ եկող խնդիրների վերաբերյալ՝ օրենսդրության սահմաններում:. Աջակցում է ցանկացած նախաձեռնություններում	<ul style="list-style-type: none">. Ինքնուրույն նախաձեռնությունների նվազ աստիճան կառավարման խորհրդի կողմից. Խորհրդի որոշ անդամների բացակայությունը նիստերից Զեռնպահ վերաբերմունք. Ոլորտի Օրենսդրական ակտերի իմացության ցածր մակարդակ

<p>.Ֆինանսական առաջարկությունները ընդունվում են և աջակցվում:</p> <p>.Հսում է ԿԱՊԿՈՒ աշակերտների կարիքի գնահատման մասին հաշվետվությունները, անում առաջարկներ</p> <p>.Լիազոր մարմնի հետ թափանցիկ փաստաթղթաշրջանառություն, հրամանների, հրահանգների կատարում՝ օրենքի սահմաններում</p>	
---	--

1.4 Հասպաղության համագործակցությունը բեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ.

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>ՏԻՄ</p> <p>.Համայնքապետարանի աշխատակիցները հաճախակի հանդիպումներ են ունենում սովորողների հետ:</p> <p>Հանդիպումների ընթացքում քննարկվում են Զարենցավան քաղաքի հիմնախնդիրները, որի արդյունքում սովորողները տեղեկացվում են համայնքային հիմնախնդիրներին: Սովորողները հանդիպումների ընթացքում անում են իրենց առաջարկությունները այդ հիմնախնդիրներին լուծում տալու համար:Ակտիվորեն մասնակցում ենք քաղաքում իրականացվող շաբաթօրյակներին և ծառատունկերին, մշակութային միջոցառումներին:</p> <p>.Զարենցավան քաղաքում էներգետիկայի, շինանյութերի, մեքենաշինական, գյուղատնտեսական ձեռնարկությունների առկայությունը, հարևան համայնքներում զբոսաշրջության և</p>	<p>ՏԻՄ</p> <p>.Համայնքի տնտեսությունը դեռևս չի հասել զարգացման այնպիսի մակարդակի, որ կազմակերպությունները մտածեն երկարաժամկետ ռազմավարական զարգացման մասին ու ներդրումներ կատարեն կրթության ոլորտում:</p> <p>.Համայնքի սոցիալ-մշակութային զարգացման ցածր մակարդակը, համայնքում սոցիալական խնդիրների սրությունը</p> <p>.Համայնքի և դպրոցի միջև թույլ համագործակցություն՝ համայնքային խնդիրների լուծման դաշտում</p>

<p>մետաղաձուլական ծեռնարկությունների առկայությունը հնարավորություն է տալիս վերը նշված կազմակերպություններին հովանավորելու դպրոցի կրթական նախաձեռնությունները</p> <p>Համայնքը, որպես շահագրգիռ կողմ, ուսումնական հաստատության հետ գտնվում է մշտական կապի և համագործակցության մեջ</p> <p>Համայնքը ուշադրության կենտրոնում է պահում ինչպես կարիքավոր ընտանիքների երեխաներին, այնպես էլ մեծ ծեռքբերումներ ունեցող աշակերտներին:</p> <p>Ուսումնական հաստատությունը մասնակցում է համայնքային բոլոր միջոցառումներին՝ սպորտային, մշակութային, բարեգործական, էկոլոգիական և այլն:</p>	
<p>Շահառու կազմակերպություններ/ՀԿ-ներ /ԿԶԱԿ, ԿՏԱԿ, ԳԹԿ/</p> <p>.Հասարակական կազմակերպությունների ակտիվ գործունեությունը և համագործակցությունը ուսումնական հաստատության հետ:</p> <p>.Ուսումնական հաստատության կողմից շահառու կազմակերպությունների հետ համատեղ իրականացված կրթական ծրագրերում աշակերտների մասնակցությունը գրեթե ամեն տարի է և մասնակիցների թիվը պայմանավորված է մրցույթի պահանջներից:</p> <p>.ԿԶԱԿ-ի կողմից ամենամսյա աշխատանքային պլանին հետևելը</p> <p>. ԿԶԱԿ, ԿՏԱԿ, ԳԹԿ, Ավագ դպրոցներ, նախնական մասնագիտական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, <<Պաշտպանության նախարարություն կողմից կազմակերպած որոշ միջոցառումներում սովորողների և ուսուցիչների ներգրավվածություն:</p> <p>.Մասնակցություն տարբեր կրթական մրցույթներին, գիտաժողովներին (2022-2023 ուստարի՝</p> <p>.Եվրասիա Ավագ դպրոց՝ ինտելեկտուալ խաղ մրցույթ, առաջին հորիզոնական: .Զարենցավանի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ մեկ ավագ դպրոցի կողմից կազմակերպած աշակերտական կոնֆերանսին մեր աշակերտները ներկայացրեցին իրենց գիտաշխատանքները:</p>	<p>Շահառու կազմակերպություններ/ՀԿ-ներ/</p> <p>.Կրթության շահառու այլ կազմակերպությունների հետ համագործակցության պակաս</p> <p>. Ներգրավվածության թույլ ակտիվություն</p>

.Արամայիս Երզնկյանի անվան թիվ 118 ավագ դպրոցի կողմից
կազմակերպած “Ես բնագետ եմ” աշակերտական կոնֆերանս:
.ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից իրականացված աշակերտական
աշխատաժողով:

Ծնողական համայնք

Ծնողական համայնքի կողմից դպրոցի հանդեպ մեծ վստահությունը: Համայնքում դպրոցն ունի բարձր հեղինակություն՝ շնորհիվ դպրոցում առկա ներքին կարգապահական կանոնների բարձր մակարդակի, ինչն ընդհանուր և միասնական պահանջներ է ենթադրում դպրոցը կազմող բոլոր օղակների նկատմամբ:

.Դպրոցում արգելվում է ցանկացած տիպի դրամահավաքություն .Ծնողները աջակցում են ուսումնական հաստատությանը բոլոր դպրոցական և արտադպրոցական միջոցառումների ժամանակ .Ապահովում են սովորողների կանոնավոր դպրոց հաճախելը: .Դպրոց-ծնող համագործակցություն

- Ծնողների բարձր հետաքրքրվածություն, պատրաստակամություն համագործակցելու դպրոցի հետ կազմակերպչական և ուսումնադաստիարակչական գործընթացում:

.Ծնողների մասնակցությամբ կազմակերպվում են ճանաչողական էքսկուրսիաներ, իրականացվում է աջակցություն դպրոցում տարրական դասարաններում դպրոցական սննդի կազմակերպմանը: .Ծնողական և աշակերտական խորհուրդները մշտապես համագործակցում են:

.Հաճախակի կազմակերպվում են կլիր սեղաններ, գրուց- բանավեճեր, միջոցառումներ, որոնց ընթացքում քննարկվում են սովորողներին և ծնողներին հուզող հարցերը: Ծնողական խորհրդի հետ համագործակցությունը դրական է անդրադառնում դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների վրա:

.Ծնողական խորհրդի, դասարանի ծնող կոմիտեի անդամների և դասղեկների միջոցով դպրոցի գրեթե բոլոր ծնողները տեղեկացված են լինում դպրոցական առօրյայից և տեղի

Ծնողական համայնք

.ինքնուրույն նախաձեռնությունների նվազ աստիճան: .Ծնողների կողմից ներքին իրավական ակտերի թույլ իմացություն:

. Ծնողների փոքր հատվածի անտարբերություն, ինքնուրույն նախաձեռնությունների և առաջարկների, մտահղացումների բացակայություն: Ոչ բոլոր ծնողների հետևողական վերաբերմունքը ուսման նկատմամբ: .Ուսումնանյութական բազայի համարման գործում այլ մարմիններին ներգրավելու ուղղությամբ ծնողների մասնակցությունը պասիվ է

. Կրթության ոլորտում ներդրումների բացակայություն .Որոշ ծնողների կողմից իրենց երեխաների նկատմամբ անհարկի բարձր ինքնազնահատականի ծևավորում:

. Ծնողի կողմից որոշ դեպքերում ուսուցչի աշխատանքի նկատմամբ անհարկի վերաբերմունքը, սեփական երեխային անհիմն պաշտպանելը

.Որոշ ծնողների իներտ մոտեցումը սեփական երեխայի ուսման կազմակերպմանը

ունեցող իրադարձությունից:Դպրոցում անցկացվող բոլոր
միջոցառումները տեղադրվում են դպրոցի էլեկտրոնային
տեղեկատվական էջում, որը ևս նպաստում է տեղեկատվության
տարածմանը:

.Գործառույթների հստակ պատկերացում և իրականացում:

.Երեխայի բացակայությունների, հաջողությունների և խնդիրների
վերաբերյալ տեղեկացված լինելը և նրան աջակցելը:

.Ծնողական համայնքի կողմից հաստատության ծնողազուրկ և
սոցիալապես անապահով ընտանիքների սովորողներին
տրամադրվող աջակցությունը՝ օգնություն ծնողազուրկ
աշակերտներին, սոցիալապես անապահով ընտանիքների
սովորողներին հագուստ և գրենական պիտույքներ տրամադրելը

1.5 Մանկավարժական համակազմի մասնագիրական որակների ներկայացում

Միջին մեծության է մանկավարժական համակազմը՝39 ուսուցիչ: Բոլորն ունեն բարձրագույն կրթություն: Բոլոր առարկաներն ունեն իրենց համապատասխան մասնագետները:

Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման և արդյունքների գնահատման գործընթացում անգնահատելի է դպրոցի մանկավարժական խորհրդի դերը: Դպրոցի մանկավարժական խորհրդի աշխատանքները որքան համակարգված և արդյունավետ են, այնքան նախատեսված բարեփոխումների, զարգացման ծրագրի հաջողություններն ապահովված կլինեն:

Որակը միշտ վերահսկվում է տնօրինության կողմից և դրան ուղղված իրականացվում են բազմաթիվ միջոցառումներ՝ վերապատրաստումներ, վերինարներ, սեմինարներ, մենթորության պրակտիկա:

Կարևորում եմ մանկավարժական աշխատողների մասնագիտական պատրաստվածությունն ու ժամանակակից մեթոդներով գինված լինելը, դրանց կիրառման պատրաստակամությունը և նվիրումը կրթության գործին:

Ուսուցիչները և աշակերտները մեկ միասնական համակարգ են, և նրանց գործունեությունը փոխկապակցված է: Մենք պետք է կարողանանք գնահատել մեր մանկավարժական պոտենցիալը:

Ընդհանուր դրվագներ ուսուցիչների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուսուցիչների համար

Ցուցանիշը	2019-2020 ուստարի	2020-2021 Ուստարի	2021-2022 Ուստարի	Փոփոխություն ների դինամիկան (աճ կամ նվազում)
Ուսուցիչների ընդհանուր թիվը	38	36	37	Նվազում
Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ Դրույքաչափը	16,3	17.8	18.1	Աճ

Ուսուցիչների թվի ավելացման հետ կապված միջին շաբաթական դասաժամերի ծանրաբեռնվածությունը պակասել է:

Տվյալներ ուսուցիչների դարձության վերաբերյալ՝ ընթացիկ ուսպարզա համար

Ուսուցիչների թիվը	2019-2020 Ուստարի	2020-2021 Ուստարի	2021-2022 Ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Մինչև 30 տարեկան	7	5	5	Անփոփոխ
31-ից 40 տարեկան	8	10	12	Աճ
41ից -50 տարեկան	3	2	1	Նվազում
51-ից -55 տարեկան	7	7	7	Անփոփոխ
56 տարեկան և ավելի	10	12	12	Անփոփոխ

Ուսուցիչների միջին տարիքը 45.8

Մանկավարժական համակազմ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>.Վարչական կազմ՝</p> <p>Ղեկավարման բազմամյա փորձ ունեցող աշխատանքում հետևողական, արհեստավարժ վարչական անձնակազմ</p> <p>.Կառավարման ժողովրդավարական ոճ</p> <p>. Մանկավարժների բնականոն աշխատանքի կազմակերպման հստակ մեխանիզմ</p> <p>.Նպատակառողված և արդյունավետ ներդարձության վերահսկողությունը՝ միտված կրթության որակի ապահովմանը</p> <p>.Համագործակցային և առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովումը</p> <p>. Բազմակարծիք ,ներառական ,մասնակցային արժեքային միջավայր,որն արտահայտվում է Միև նիստերում և ընդգրկվում ուսումնադաստիարակչական ,Ներքին կարգապահական,Ներքին գնահատման հաշվետվություններում</p>	<p>. Ուսուցիչները խուսափում են “Լավագույն ուսուցչի” մրցույթին և կամավոր ատեստավորմանը մասնակցելուց</p> <p>. Ուսուցիչների մի զգալի մասը չի ընդունում ներառականությունը դպրոցում</p> <p>. Ուսուցիչները չեն ձգտում տարակարգ ստանալ</p> <p>. Թույլ է ուսուցիչների ստեղծագործական աշխատանքը, քիչ են ներառվում տարբեր նախագծերի մեջ</p> <p>. Ուսուցիչների որոշ մասի մոտ թույլ են SCS հմտությունները</p> <p>. Ցածր է մասնագիտական մոտիվացիայի մակարդակը</p> <p>. Դասարաշխումը հիմնված չէ ցուցաբերած արդյունքների վրա</p> <p>. չկան մենթոր ուսուցիչներ</p> <p>. ցածր է իրականացվող նորարարությունների թիվը</p>

<p>.Կա ուսուցչի որակավորման առաջին աստիճան ունեցող հինգ ուսուցիչ</p> <p>. Կա կամավոր ատեստավորված մեկ ուսուցիչ(մաթեմատիկա-69 միավոր)</p> <p>. Բոլորն ունեն բարձրագույն կրթություն</p> <p>. Բոլորն աշխատում են իրենց մասնագիտությամբ</p> <p>. Կոլեկտիվում կան ինչպես փորձառու, այնպես էլ երիտասարդ ակտիվ ուսուցիչներ, որոնց աջակցում և օգնում են առավել փորձառուները</p> <p>. Կոլեկտիվը ունի բարձր մասնագիտական որակներով և աշխատաեր մանկավարժների մի մեծ խումբ, որոնք բարձր մակարդակ են ապահովում ուսման գործընթացում</p> <p>. Բավականին մեծ են բաց դասերի և փոխադարձ դասալսումների քանակը</p> <p>. Մեթոդական միավորումները աշխատում են համակարգված</p> <p>. Մեթոդմիավորումների ներսում տեղի են ունենում նոր չափորոշչային պահանջների քննարկում և ներդրմանը ուղղված միջոցառումների ծրագիր է կազմվում</p> <p>. Մեթոդական միավորումները աշխատուն են համագորխակցվախ</p> <p>. Հաստատությունում առաջին քայլերն են արվում ուղղված նախագծային և հետազոտական աշխատանքների ուղղությամբ</p> <p>. Անձնակազմը պատրաստակամ է նորարարությունների, կարողունակությունների վրա հիմնված կրթության կազմակերպման գործում</p>	<p>. քիչ են անցկացվում առարկայական շաբաթներ</p> <p>. Զկան վերապատրաստող, վերապատրաստման դասընթացներ վարող ուսուցիչների</p> <p>. Զկան միջազգային ու համապետական պարբերականներում (ամսագրերում)հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական, հեղինակային և այլ աշխատություններ ունեցող ուսուցիչներ</p>
---	---

Տվյալներ մանկավարժական աշխատողների և նրանց գործունեության վերաբերյալ

Ցուցանիշ	2019-2020 Ուստարի	2020-2021 Ուստարի	2021-2022
Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	38 100 %	38 100%	38 100%
Ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. Ըստ մասնագիտության դասավանդող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	38 100%	38 100%	38 100%
Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. տարակարգ ունեցող	1	4	4

հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	2,6%	10,5%	10,5%
Կամավոր ատեստավորված ուսուցիչների թիվը	-	-	-
Գիտական կոչում ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. գիտական կոչում ունեցող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	-	-	-
Նախարարության կողմից երաշխավորված կամ այլ կազմակերպություններում վերջին 3 տարում վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. վերջին 3 տարում վերապատրաստում անցած հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	-	-	-
Որպես ուսուցիչ վերապատրաստող (դասախոս)	-	-	-

Վերապատրաստված և վերապատրաստման դասընթացներ վարող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. Վերապատրաստման դասընթաց վարող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)			
Ուսուցիչների միջին տարիքը (հաշվարկ. հաստատության բոլոր ուսուցիչների տարիքների գումարի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին)	44,6	46	46,4
Միջազգային ու հանրապետական պարբերականներում (ամսագրերում)հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական, հեղինակային և այլ աշխատություններ ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը. (տոկոսի հաշվարկ. հոդվածներ և վերը նշված մասնագիտական հրապարակումներն ունեցող	-	-	

հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)			
Դասավանդման աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. դասավանդման աշակերտակենտրոն, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և կիրառող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	38 100%	38 100%	38 100%
Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում՝ ինտերնետ, կիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում ինտերնետ կիրառող	38	38	38


ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	100%	100%	100%
Սովորողներին համակարգիչների կիրառմամբ տնային աշխատանքներ հանձնարարող ուսուցիչների թիվը	38	38	38
Ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչների փոխադարձ դասալսումների թիվը	700 և Ավել	700 և Ավել	700 և Ավել
Նախարարության, ինչպես նաև նախարարության և Մայր Աթոռ Սուլք էջմիածնի հետ համատեղ անցկացվող մրցույթներին մասնակցած ուսուցիչների թիվը և տոկոսը: (տոկոսի հաշվարկ. մրցույթներին մասնակցած հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	-	-	-

Աշակերտական համակազմ

Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուսուցիչների համար

Դասարանների թիվը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
1 -ին դասարան	3	3	3	Անփոփոխ
2-րդ դասարան	2	3	3	Անփոփոխ
3-րդ դասարան	3	2	3	Աճ
4-րդ դասարան	3	3	2	Նվազում
5-րդ դասարան	2	3	3	Անփոփոխ
6-րդ դասարան	2	2	3	Աճ
7-րդ դասարան	2	2	2	Անփոփոխ
8-րդ դասարան	3	2	2	Անփոփոխ
9-րդ դասարան	2	3	2	Նվազում
Ընդամենը	22	23	23	Անփոփոխ

Դասարանների թվաքանակն նախորդ՝ 2021-2022 ուստարվա համեմատ մնացել է անփոփոխ:




Տր.1 Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Ըստ դասարանների՝ սովորողների թիվը ընթացիկ ուստարված համար

Սովորողների թիվը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
1-ին դասարան	81	77	87	Աճ 10 աշակերտով
2-րդ դասարան	71	79	78	Նվազում 1 աշակերտով

3-րդ դասարան	78	70	74	Աճ 4 աշակերտով
4-րդ դասարան	84	79	70	Նվազում 9 աշակերտով
5-րդ դասարան	70	83	76	Նվազում 7 աշակերտով
6-րդ դասարան	59	70	89	Աճ 19 աշակերտով
7-րդ դասարան	71	60	70	աճ 10 աշակերտով
8-րդ դասարան	80	70	65	նվազում 5 աշակերտով
9-րդ դասարան	46	57	67	աճ 10 աշակերտով
Ընդամենը	607	651	676	աճ 25 աշակերտով



Տր.2 Ըստ դասարանների՝ սովորողների թիվը ընթացիկ ուստարվա համար

Փոփոխությունների դինամիկայում աճ է գրանցվել, ավելացել է աշակերտների թվաքանակը կապված՝ պայմանավորված մի շարք գործոններով.

ա/Ծնողական համայնքի կողմից դպրոցի հանդեպ մեծ վստահությունը: Համայնքում դպրոցն ոնի բարձր հեղինակություն՝ շնորհիվ դպրոցում առկա ներքին կարգապահական կանոնների բարձր մակարդակի, ինչն ընդհանուր և միասնական պահանջներ է Ենթադրում դպրոցը կազմող բոլոր օղակների նկատմամբ:

բ/Դպրոցում արգելված է ցանկացած տիպի դրամահավաքություն

գ/Դպրոցի տնօրինության կողմից իրականացվող ճիշտ ռազմավարությունը, անկաշառ և խստապահանջ աշխատանքը ստեղծում է ուսման և դաստիարակության համար անհրաժեշտ բոլոր պայմանները՝ ապահովելով աշակերտների թվաքանակի կայուն աճ

